ցիսն, մանաւանդ այնց որք են հեռի ի քաղաքէն։ Կնքահարք մեծամեծք անձինք էին...։ ...Եկող գնացող, թէ հայք և թէ Ֆռանկք բազումք են, ոչ անցանի օր, որ ոչ գայցեն օտարականք, յանցեալ կիրակի կանուխ եկին ոմանք ղաբանցիք առ ի լսելոյ զպաշտօնն, այսինքն զգիշերաժամն և զձայնաւոր պատարագն...։

Նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ

Թուին փրկչին 1718
Օգս. 20 ի Վենետիկ

ԺԴ.

Աբրահոմ կը գրէ դարձեալ Հ. Եղիա ազգային շահեկան տեղեկութիւններ։ «Օգէնտ եպիսկոպոս Մաճարու» ակնարկութիւնը անշուշտ կերբա հայաքաղքին հիմնադիր Օգէնտ վրդպտ. Վրգարեանն է, որ Դրանսիլվանիոյ Հայոց եպիսկոպոսն էր. (տես Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ Հ. Գրիգոր Վ. Գոնվրիկեանի, այժմու Արք. և Ընդհ. Աբրահոմ Մխիթարեանց Վիեննայի)։

Գերայարգելոյ տեառն տեառն Մխիթարայ Վարդապետի
Աբրայ Հօր մերոյ

... իմա զայս, զի ի մաճարոյ ոմն քահանայ եկն աստ (զայս յօնան եպիսկոպոսն չիմանայ), ընդ նմա գոլով եղբօրորդի օգէնտ եպիսկոպոսին մաճարու, ինքն է իբրև չորեքտասան ամաց և կամ հնգետասան ամաց, և եկեալ է ընդ քահանային գալ ի հոսմ մտանել ի գուլէճն, իսկ քահանայն է յայն քաղաքէ մաճարոյ, որ է բուն հայոց՝ տրեցեալ ի կայսերէն[1] նոցա, իշխանութիւն դատելոյ, այսինքն ունին իշխանութիւն դատաստան առնելոյ։ Գոն աւելի քան զերեք հարիւր տունք, և բարւոք մեծ քաղաք իմն է դաշտաւոր, և ի սմին նահանգիս գտանին աւելի քան զութ հարիւր տունք հայոց. բայց զի ժողովուրդ այսորիկ քաղաքիս, թէպէտ ի ժամանակս օգէնտին լեալք են ուղղափառք, սակայն այժմ ոչ են այնպիսի որպէս էին երեկն և եռանդն. և այս թէ մեծամեծք և թէ ռամիկք. միայն զշուր խառնելն ունին ի պատարագ, և համբաւեն զինքեանս զոլ ուղղափառ առ պետութիւնս քրիստոնէից, թէ առ հոգևորս և թէ առ մարմնաւորս, այսինքն թէ առ եպիսկոպոսս և թէ առ իշխանս ենթ որոց են, բայց ի ժողովս և ի յեկեղեցիս իւրեանց վարին, գրէթէ այնպէս ամենևիմբ որպէս հերձուածող հայսն, թէ ըստ տօնին և թէ ի յայլս բնաւս ծէս և ի յաւանդութիւնս։ Եւ այժմ ոչ ունին զեպիսկոպոս կամ զհովիւ ոք. իսկ այս քահանայս զոլով բարեպաշտ՝ տեսեալ թէ ոչ կարէ նոցա օգտել, դիմեալ է աստ գալ, և տանիլ զխաչատուր վարդապետն ի քաղաքն այն, առ ի ուղղել զնոսին քարոզութեամբ և խրատիւ. և կամ թէ սա ոչ երթիցէ, դիտէ գալ ի հոսմ, և խնդրել զմի ի տղայոց դպրատանն և տանիլ անդ։ Իսկ խաչատուր վ. ընկալեալ զսոյն քահանայս, ասաց նմա, թէ քեզ ոչ տան զոք ի տղայոց դպրատան, կացջիր աստ, և գայ աբբայ հայրն, և նա տացէ քեզ զմի ոմն ի վարդապետաց, և տարցես անդ. և այսպէս զքահանայն իմով թոյլատուութեամբս արգելեաց աստ մինչև ի գալ քոյ։...

յԱմի տեառն 1718. հոկտեմբերի 12
ի քաղաքն վենետիկու

Քոյոյ գերազանցութեանն
նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ

---

1. Որ է Լէոբոլտոս կայսր